



# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ



# ԱԶԱՐ ՀԻՆԳ ՀԱՐԻՒՐ ԱՄԵԱԿ ՀԱՅ ՏԱՌԻ



Ս. Ե. ՋՅՄ. Ի Ա. Ժ. Ի. Ն

## Հ Ա Յ Ո Ւ Թ Ե Ա Ն Ս Ի Ր Տ Ն Ո Ւ Փ Ա Ր Ո Ս Ը

Հայերի նւիրական այս սրբավայրը, շրջապատւած պայծառ զրոյցների և վեհապանձ աւանդութիւնների փառքով, մարմնացած չէ այնպիսի մի շինւածքի մէջ, որ արժան լինէր էջմիածնայ—որպէս հայերի տաան և վեց դարեան վշտալի կեանքի, հոգեկան կենտրոնի, ախոյեանի և լուսատւի պատմական դերին: Հայկական ճարտարապետութիւնը, որ ստեղծել էր իր աւերակներով իսկ երևելի Անիի հոյակապ տաճարը, Գեղարդի վանքը, իր գեղեցկատեա և պանծալի դարդարուն ոճով, ոչինչ չէ տւել հայ ազգի կրօնական Մայր Աթոռին:

էջմիածնի պարսպների տակ կանգնել են իրանց բանակներով պարսիկները, յոյները, արաբները, հասել են այստեղ սելջուկ թուրքերը, թամերլանի մոնղոլ հրոսակները, կրկին տաճիկները և կրկին պարսիկները: Իրանց կատաղի աւերիչ ընթացքով այդ ազգութիւններն այստեղ, Հայաստանում, առաջին անգամ փորձում էին իրանց նոր արթնացող ոյժերը, թողնելով այդ խաղաղութիւնից զուրկ երկրում իրանց ներկայութեան դարերով անջնջելի չարւող հետքեր:

Հարազատ իր ազգի վիճակին, էջմիածինն ընկել է նման իր բազմաշարշար ազգի:

էջմիածնայ վանքի իւրաքանչիւր աւերումից յետոյ, այդ սրբավայրի պատրիարքը թողնում էր նրա աւերակները, մինչև աւելի լաւ օրեր, մինչև նոր խաղաղութիւն, կրբ ժողովրդի ձեռքը հաւաքում էր կրկին քարեր և փոշից բարձրացնում էր պատեր:

Վերջին անգամ էջմիածինը աւերւեց 1605 թ.: Շահ-Որբասը մտադիր էր ապահովացնել Պարսկաստանի սահմանները սուլթան Մուրադ Ա-ի յարձակումներից, ստեղծելով մի անապատ իր երկրի և Տաճկաստանի մէջ: Հրդեհներով տարւած Արաբասեան երկրից ազգաբնակչութեանը քշեցին դէպի Արաբս գետը, պարսիկների սրերի հարւածների տակ նա լողալով անցնում էր միւս ափը. իր զոհերի թւի բազմութիւնով, դա պատմութեան յայտնի ամենասարսափելի կոտորածն էր:

Արբասի Պարսկաստան աքսորած նոր հպատակները Սպահանը ստեղծեցին, ծաղկեցրին արհեստները, վաճառականութիւնը, բայց չէին դադարում ձգտել դէպի իրանց թողած հայրենի աճիւնը: «Գերութիւնը» բարձրացնելու համար, Արբասը բերել աւել էջմիածնից նրա քարերը, մտադրւելով օտար վայրում վերա-




կանգնեցնել աթոռանիստ տաճարը, բայց աւանդ, այդ բարերը յիշեցնում էին միայն հայրենիքի աւերումը: Յուսալով հայերին հաշտեցնել իր հետ, Աբրաքոսը ոչ մի միջոց չէր խնայում և մահից առաջ քայքայած էջմիածնայ տաճարին ուղարկեց թանկագին մի ջահ: Այդ ջահը կախեցին 1629 թ.: Աբրաքոսի մահից մի տարի յետոյ, երբ Մովսէս կաթողիկոսը նորոգեց էջմիածնայ վանքը, 1654 թ. աւելացրին նրա շինութեանը զանգակատուն, որի երեսը ծածկեցին պորֆիրի սրբառատաշ քարերով: Այդ կերպով վանքը պահպանել է մինչև մեր ժամանակ:

Նրա շինութեան մէջ ամեն ինչ վկայում է հաղահեղ կատարած գործ: Զէ զգացում ոչ Անիի որմնագիրների խաղաղասիրտ ոգևորութիւնը և ոչ երևելի Կեղարզը շինողների արտազրամ գեղեցկութիւնը:

Ի՞նչ անյաղթ իմաստագէտը և Արրատի գետի ճիւղը շատ կաթողիկոսներ, գրականութիւն հակա (V-դ.) ստեղծող Բագմաստեղք հաւաստեց, ստեղծեց նում էջմիածնայ տաճարի պատերի վրայ:

Էջմիածնայ այդ նկարների ազգային պատմական բովանդակութիւնը բոլորովին համապատասխանում է հայկական արարողութեանց բովանդակութեանը, որ համարեա ազատ է ջատագով փառանկողութիւնից և ճգնաւորական ձգտումից, որ մի շարք աղօթքներով և շարականներով բաց է անում մեր ստաջ ազգային պատմութեան մի երկար ծրար:

Էջմիածնայ վանքի համեստ կերպարանքը չէ կարող նրա դիւթականութեան կշիռ ծառայել: Էջմիածնայ տաճարի պատմանդանի վրայ բարձրանում է կաթողիկոսի վեհապանձ անձնագորութիւնը. IV դա-



Հ Ա Յ Կ Ա Զ Ն Ա Ն 1600-Ա Մ Ն Ա Յ Լ Ո Ւ Ս Ա Ւ Ռ Ր Չ Ա Կ Ա Ն Գ Ա Հ Ս. Էջմիածնայ վեհապանի ծագկեայ դահլիճում.

Տաճարի ներք զուրկ չէ հրաշաւորութիւնից, բայց արեւստագիտական յիշատակներով չէ փայլում: Հայերը չըստեղծեցին ազգային նկարչութիւն և տաճարի ամենալաւ դարդարանքներն են Փլամանդրեան և իտալական շխոյաչի պատկերները—որոնք Հովանդիայի և Վենետիկի հետ առևտուր ունեցող վաճառականների ընծաներն են: Բայց իրանց բովանդակութիւնով էջմիածնական նկարներն ունեն զուտ ազգային բնաւորութիւն: Դա Հայաստանի պատմական անձնաւորութիւնների մի պանթէօն է—հալածանաց դարերի, մաքառման դարերի և համեմատաբար կարճատև խաղաղութեան և բարեյաջող դրութեան միջոցների, որ նշանաւոր են գրականական ստեղծագործութեան ոգով: Կաթողիկոս Մեծն Ներսէս և գիտնական Դա-

բում թագաւորական իշխանութեան հետ մրցելիս, երբ զա թերւում էր հո գէպի Ասիա, յաղթեց արեւմտական կաթողիկոսը, յենւելով ազգի վրայ: Ազգի ընտրած կաթողիկոսները, մեծ մասամբ, իրանց ժամանակի ամենալաւ մարդիկն էին, իրանց երկրի ձգտումների ամենալաւ արտայայտիչներն էին, հաշտութեան միջնորդներ, ազգին ոգևորողներ և լուսաւորողներ էին:

Այն օրերին, երբ երկրի մէջ կորչում էր աւելի լաւ ապագայի յոյսը, երբ թշնամիների հարւածների տակ հոգեսպառ միայնացած հայ ազգը կարող էր երես դարձնել իր սրբութիւններից և հրաժարւելով իր կուլտուրական ստացածքներից, մտնել ասիական հրոսակների շարքը, այդ միջոցներին միայն էջմիածինը չէր յոգնում յոյս տալ իր ազգին:



Տ. Տ. ԳԵՈՐԳ Վ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ  
ՎԵՂՍՓՍԻ ՆՍԻՍՅԱՆ ՀԱՄԱԶԳՍՅԻՆ ՅՈՐԵԼԵՍՆԻ




## ՀԱՅՈՑ ՏԱՌԻ ԳԻՒՏՆ ՈՒ ՅԱՂԹԱՆԱԿԸ

(Քաղաւածք Իս. Յարութիւնեանի «ՀԱՅՈՑ ԳԻՒՐԸ», Իզմիրեան մեցմեակով պատկած ճեմանաւոր աշխատիքից)

Ա.

դպերի պատմութեան մէջ գրի սկզբնաւորութիւնը սովորաբար վերագրում են ասուածներին կամ այնպիսի մարդկանց, որոնք յարաբերութիւն ունէին ասուածներ-



րի հետ, որովհետև այդպիսի մի հրաշալի ստեղծագործութիւն միմիայն ասուածների գործը կարող էր համարուել: Օրինակ՝ եգիպտական ւաւանդութիւնը գրի սկզբնաւորութիւնը վերագրում է Տաուօ-ին, որ միւնսյն ժամանակ լեզւի և խօսքի սասուածն էր, զարգացրեց աստղագիտութեան, երաժշտութեան արւեստները և գտաւ ձիթենին: Բաբելոնական ւաւանդութիւնը գրի ստեղծագործութիւնն ընծայում է Օանէս-ին, որ

մի էակ էր՝ կէսը մարդ, կէսը ձուկ: Ըստ չինական ւաւանդութեան՝ նրանց գիրը գտաւ Փօհի-ն, մեքսիկացիներն իրենց գրի գիւտը վերագրում են Կետզալկոատլ աստծուն: Իրանական ւաւանդութիւնը գրի սկզբնաւորութիւնը վերագրում է Տահմուրաթ արքային, որին յաջողեց գիրը դեբերի ձեռքից կորզել, որովհետև թէև բարի ոգիներն արդէն վաղուց գտել էին գիրը, սակայն դեբերի ձեռն ընկնելով՝ անյայտ էր մնացել մինչև Տահմուրաթի ժամանակը: Յունաց գրի գտնողն է հանգիստնում Կաղմոսը, որ Փիւնիկիայից է գալիս: Գոթական գրի գիւտը գերմանական ւաւանդութիւնը վերագրում է Ուլֆիլաս-ին, թէև յայտնի է, որ Ուլֆիլասը ոչ թէ նոր գտաւ գոթական տառերը, այլ հին գերմանական ըունէ կոչւած նշանները կատարելագործեց՝ զոպիտը լրացնելով և յաւանական տարբերներն մտեցնելով:

Այս ւաւանդութիւններից էլ երևում է, որ գրի ստեղծագործութիւնը մի անհտաի գործ չէ. մարդկութիւնը շատ փորձերից յետոյ միայն պէտք է կարողանար ձեռք բերել այն, ինչսը այսօր մեզ համար սովորական է գործել: Գրի սկզբնաւորութեան մասին վերայիշեալ ւաւանդու-

Թիւնները թէև արտաքուստ առասպելներ են, սակայն եթէ մի փոքր խոր գննենք դրանց, կը տեսնենք, որ մօտենում են ճշմարտութեան: Վերցնենք օրինակ եգիպտացոց և յունաց աւանդութիւնները. թէև առասպել է թւում, որ Տաուլթն է գտնում եգիպտական գիրը, լեզուն, աստղագիտութիւնը, երաժշտութիւնը և այլն, սակայն կարող է պատահած իրողութեան ձևակերպել, եթէ ընդունենք, որ Տաուլթ անւան տակ ծածկւած է եգիպտական քրմական դասակարգը: Անկասկած է նոյնպէս, որ փիւնիկեցոց գիրը Յունաստան փոխադրող Կարմուսը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի նոր կրօն, որ Փիւնիկիայից Յունաստան տարածւեց՝ իր հետ միասին տարածելով նոյնպէս և փիւնիկեան այբուբենը:

Մասնաւորելով մեր խօսքը հայոց գրի մասին, պէտք է ասենք, որ միևնոյն երևոյթն է կրկնում: Մեր պատմութեան մէջ անթափանցելի քողով է ծածկւած հայոց գրի զարգացման ընթացքը. մեզ անյայտ է թէ՛ երբ ու կեցին հայերը սեպհական գիր գործածել և երբ դադարեցին: Միայն այնչափ կարելի է եզրակացնել, որ ունեցել ենք սեպհական ասոագիր, սակայն այս գիրն չորրորդ դարի վերջերին գործածութեան մէջ չըլինելով՝ բոլորովին մոռացւել էր: Ըստ մեր ազգային աւանդութեան՝ հայոց այբբենն էլ գտնուում է հրաշքով. «ոչ քնած ժամանակ, ոչ էլ արթուն»:

Քրիստոնէութիւնը մուտ գործելով Հայաստան, իր հետ միասին ներմուծեց նաև յունական եւ ասորական գիրը և հալածեց տեղական գիրը, որ ամուր կապերով շղթայւած էր կռապաշտութեան հետ: Համարեա պատմական օրէնք է, որ իւրաքանչիւր նոր կրօնի հետ ազգերն ընդունել են նաև նոր գիր. փիւնիկեցոց այբուբենը տարածւեց Յունաստանում Փիւնիկիայից բերւած մի կրօնի հետ, իսլամութիւնը տարածեց ամեն տեղ արաբական նետի կաշւած գիրը. հռովմէական գիրը տարածւեց արևմտեան Եւրոպայում սբ. գրի հետ, ինչպէս նաև դեանազարի և պալի կոշւած գրերը Հնդկաստանում:

Սակայն յունաց և ասորոց զրբերի տիրապետութիւնը երկար չէր կարող տևել Հայաստանում, որովհետև քրիստոնեայ եկեղեցու եռանդուն պաշտօնեաները չբաւականանալով ազգային կրօնի ոչնչացմամբ՝ ձգտում էին նաև ազգային լեզուն խախտել՝ եկեղեցու պաշտամունքը յունարէն և ասորերէն լեզուով կատարելով: Ազգն

ըմբռնեց այդ գրութեան վտանգաւոր լինելը և դրա առաջն առնելն իր կենսական խնդիրը դարձնելով՝ ամեն կերպ աշխատեց վերականգնել ազգային գիրը, լեզուն և գրականութիւնը: Այս գաղափարով տոգորւած հայ սերնդի մեծ ներկայացուցիչներն էին Սահակ Պարթեւը եւ Մեսրոպ Մաշտոցը:

Կարծես Նախախնամութեան կարգադրութեամբ է լինում, որ չորրորդ դարի վերջին մասն ունենում են երկու մեծ հայ ներկայացուցիչներ, որոնք իրանց հանճարով և միահամուռ ուժով զուլիս բերին այն մեծ գործը, որ ժամանակակից սերնդի իդէալն էր: Այդ հանճարները վերականգնելով հայոց սեպհական գիրը և դրա միջնորդութեամբ տարածելով ամբողջ հայ աշխարհում ազգային եկեղեցու և դպրութեան հաւատարիմ մշակներ, այնպիսի ծառայութիւն արին իրենց հայրենիքին, որ անզուգական է մեր պատմութեան մէջ: Զրպէտք է մոռանալ նոյնպէս, որ քրիստոնէական ուսման տարածման և ժողովրդականացման գաղափարը հայոց գրի վերանորոգման ամենամեծ շարժառիթներէից մէկն էր: Սուրբ Մեսրոպը թողնելով արքունի պալատը, շրջում է Հայաստանի բոլոր անկիւնները և քառասուն և հինգ տարի շարունակ քարոզում և աւանդում է քրիստոնէութեան հետ նաև ազգային գաղափարը, ազգային եկեղեցիով ազգային ներքին կապ է հաստատում և ամեն տեղ զըպրոցներ բաց անում:

Թէ հայ աշխարհը համարեա չորս դար առաջ էր տեսել իր անդրանիկ քրիստոնեայ առաքելներին և մօտ մի դար առաջ ընդունել իսկապէս քրիստոնէական վարդապետութիւնը, սակայն սբ. Մեսրոպը ներկայանում է ոչ թէ միայն իբրև նոր Առաքեալ քրիստոնէական եկեղեցու, այլ նաև իբրև հարազատ զաւակ Հայաստանի: Նրան յաջողեց վերականգնել ազգայնութեան գաղափարը, որ ճնշւել էր քրիստոնէական վարդապետութեան ազդեցութեամբ: Նա կարողացաւ քրիստոնէական գաղափարը կապակցել մայրենի գրի և լեզուի հետ՝ խրախուսելով թէ կաթողիկոսից և թէ թագաւորից: Մայրենի գրի և լեզուի ամբողջ Հայաստանում տարածւելուն մեծապէս նպաստեց սբ. Մեսրոպի և վարդանի դեսպանութեան աջողութիւնը Բիւզանդիոնում: Այս աջողութիւնը պէտք է նկատուի իբրև մեր պատմութեան ամենանշանաւոր դէպքերից մէկը. եթէ որ. Մեսրոպին արգելէր յունաց բաժնի Հայաստանում

տանում ևս տարածելու հայկական գիրն ու լեզուն, հասկանալի է թէ այդպիսով առաջացած պատակտումը որչափ վնասակար պէտք է լինէր նոր սկսւած գործի համար:



Բ.

այ ազգն ընդունելով քրիստոնէութիւնը, ոչ թէ միայն իր հին կրօնը կորցրեց, այլ և նրա ազգայնութեան զարգացման ուղին խանգարեց. ազգային բնաստեղծութիւնն ու առհասարակ դրականութիւնը սերտ կերպով շղթայւած էին կրօնի հետ և այդ իսկ պատճառով նոր սկեղեցու պաշտօնեաներն ամեն ճիգ թափեցին դրանց հետքը ջնջելու: Եւ որպէսզի այդ խիստ զգալի շղթանի ժողովրդի համար, նրանք հների տեղ նոր և քրիստոնէական գաղափարներ պարունակող երգեր տարածեցին ժողովուրդի մէջ: Մեր եկեղեցական նոր պաշտօնեաները մեծ մասամբ օտարներ լինելով ոչինչ զգացումն չէին կարող ունենալ հայոց ազգայնութեան գաղափարի համար, այդ պատճառով անխնայ ոչնչացրին այն ամենը, ինչոր կապած էր հայոց հին կրօնի հետ: Նրանք վանքեր և դպրոցներ հիմնելով Հայաստանում, թէև ազգի առաջադիմութեան նպաստեցին, սակայն այդ էլ ի վնաս ազգայնութեան գաղափարի եղաւ, որովհետև այդ հիմնարկութիւններն օտար լինելով՝ դրանց տւած դաստիարակութիւնն էլ օտար էր. տիրող լեզուն ևս ոչ թէ ժողովրդի մայրենի լեզուն էր, այլ յունարէնն ու ասորէնը:

Անա այդ միջոցին սբ. Մեսրոպի վերանորոգած հայ գիրը պատճառ է լինում, որ հայոց մտաւոր զարգացումն ու առաջադիմութիւնը կրկին ուղիղ շաւղով առաջ գայ և այդպիսով շուտով հասնում է հայ գրականութեան ոսկէ դարը: Այն ազգը, որ մոռացութեան տալով իր սեպհական հին գիրը՝ մուրացկանութեամբ սովորում և գործ էր անում յունաց, պարսից և ասորոց տառերը, կարճ ժամանակից յետոյ տէր եղաւ մարդկային մտքի նշանաւոր արտադրութիւններից մէկի, սբ. գրքի գեղեցիկ թարգմանութեան, որ շատ եւրոպացի գիտնականների ասելով՝ ամենաճիշտ թարգմանութիւնն է և կոչւել է «Թագուհի թարգմանութեանց»: Թէ որպի-

սի ընդունելութիւն գտաւ սբ. Մեսրոպի գործը հայ ժողովրդի մէջ, կարելի է պարզ տեսնել հայ պատմագիրների խօսքերից. «Սմեհայն անձն յորդորեալ փափաքէր յունուսն հայերէն գիտութեան, որպէս ի խաւարէ՝ յասորի տանջանացն գերծեալք ի լոյսի խնդային»:—Ղ. Փարսեցի:

Ամբողջ ազգը ոգևորւած էր՝ լսելով եկեղեցու բեմից և դասից իր մայրենի բարբառի հրնչիւնները. «Յայնմ ժամանակի երանելի և ցանկալի աշխարհս հայոց անպայման սքանչելի լինէր... անդ էր այնուհետև սրտայիր ուրախութիւն և ակնավայել տեսիլ հայելոյն»:—Կորյուն Սքանչելի:

Հայոց լեզուի և գպրութեան հաստատման ժամանակին նւիրւած մեր Սքանչելի Կորիւնի այս գեղեցիկ խօսքերը ճշտիւ համապատասխանում են գերմանական բնաստեղծ Ուլրիխ Փօն Հուտտէնի—որ ժամանակակից էր գերմանական կրօնական մեծ յեղափոխութեան—բացազանչութեանը. «Ո՛վ դար ուսումնքը ծաղկում են, ոգիքն արթնանում, ապրելը զւարճութիւն է»:

Այն ազգը, որ Աստուծոյ տաճարում պէտք է լսէր յունարէն կամ ասորի լեզուով արտասանւած «Հայր մերը» շուտով ունեցաւ յունական ամենաերևելի փրկիստիանների հեղինակութիւնների թարգմանութիւնը, ամենքն աշխատում էին մայրենի լեզուն սովորել. բազմաթիւ երիտասարդներ զիմում էին Յունաստան, Եգիպտոս և գիտութեան այլ կենդրոններ՝ իրանց ուսման ծարաւը յագեցնելու և հայրենիքի առաջադիմութեան նպաստելու:

Հինգերորդ դարի հայ սերնդի ձգտումը՝ կատարելապէս ուսանել յունաց և ասորոց լեզուները, որպէսզի այդպիսով ծաղկեցնեն մայրենի լեզուն ու գրականութիւնը, կարելի է համեմատել այն շարժողութեան հետ, որ տեղի ունեցաւ Իտալիայում՝ XIV-րդ և Գերմանիայում՝ XV-րդ դարում:

Միջին դարում գերմանական և ռոմանական ազգերը, չընայելով իրենց առանձնայատկութիւններին, ունէին մի ընդհանուր կապ. եկեղեցու կապը միացրել էր բոլորին. լատիններէնը համարում էր մի ընդհանուր եւրոպական, եկեղեցական լեզու: Հոգևորականներն ամեն տեղ խօսում և գրում էին այդ լեզուով. ամեն տեղ եկեղեցական պաշտամունքը կատարւում էր լատիններէն լեզուով: Տամուկորսերորդ դարից բուկաւում է յունաց դասական գրւածքների ուսում-

նասիրութիւնը և զքա հետ միասին մայրենի լեզուով գրելու ձգտումը: Առաջին փորձերը լինում են Իտալիայում. Իանտէն, Բօկաչիօն, Պետրարկան հարթեցին այդ շաւիղը. այս երեք հանճարները զարգացրին մի գեղեցիկ բանաստեղծական ու վիպական նոր մայրենի լեզու և գրականութիւն: Իտալիայի արւեստ խնկարկող սերունդը սքանչանում էր դասական մատենագիրների գեղեցկութեամբ. յունական գիցարանութիւնն աւելի էր հիացնում նրան, քան քրիստոնէական վարդապետութիւնը: Գերմանիան ևս հետևելով դասական ուղղութեան, ուսումնասիրում է յունարէնը, բայց առաւելապէս հետևում է քրիստոնէական վարդապետութեան: Սբ. գրքի գերմաներէն թարգմանութիւնն այդ ուղղութեան նշանաւոր արգասիքներից մէկն եղաւ: Սբ. գրքի թարգմանութիւնն է առիթ լինում գերմանացոց մայրենի լեզուի հետզհետէ մշակման և գրականութեան ծաղկման:

Հինգերորդ դարի հայ սերնդի բռնած ուղղութիւնը նոյնն էր. հայերէն դպրութիւնն ուսանում էին՝ սբ. գիրքը և եկեղեցական պաշտամունքը հասկանալու համար. յունարէն դպրութիւնն ուսանում էին՝ հայերէն ճիշտ թարգմանելու համար: Հայերէն դպրութիւնը հինգերորդ դարում այնպէս արագ չէր զարգանայ, եթէ անմիջապէս սբ. գիրքը չըթարգմանէր և դպրութեան նպասակը զխաւորապէս եկեղեցական հեղինակութիւնների ծանօթութիւնը չըլինէր: Հարկաւ, այդ նպատակին հասնելուց յետոյ, հայ դպրութիւնը կանգ չառաւ և իր մէջ առաւ նաև պատմական, փիլիսոփայական և գիտութիւնների ուրիշ ճիւղերը:

Քրիստոնէութիւնը մուտ գործելով Հայաստան, իր գոյութեան կուռի մէջ ոչնչացրեց եղածը և տարածեց ժողովրդին օտար՝ ասորերէն և յունարէն լեզուն ու գիրը. այս հանգամանքից առաջացաւ այն անբնական դրութիւնը, որի դէմ մաքառեց հինգերորդ դարի առաջին մասի հայ սերունդը և աջողութիւն ունեցաւ:

Հայոց այբուբենի վերանորոգման հետևանքներն այսպէս համառօտելուց յետոյ, տեսնենք թէ մեր մատենագիրներն ինչպէս են պատմում հայոց գրի «գիւտը»: Սբա համար երեք նշանաւոր աղբիւրներ ունենք. ա). Կորիւն Սքանչելու գրած սբ. Մեսրոպի վարբագրութիւնը, բ). Մովսէս Խորենացու հայոց պատմութիւնը և գ). Ղազար Փարպեցու հայոց պատմութիւնը: Կորիւն

Սքանչելին սբ. Մեսրոպի աշակերան ու գործակիցն էր և նկարագրում է իր աչքով տեսածը և նականջով լսածը: Մովսէս Խորենացին նոյնպէս ժամանակակից է սբ. Մեսրոպին, նրա աշակերան է անւանում իրեն, բայց արտասահմանից վերադառնալով՝ այլևս կենդանի չէ գտնում նրան: Մի փոքր յետոյ է գրում Ղազար Փարպեցին հայոց պատմութիւնը, սակայն սա էլ սբ. Մեսրոպի անմիջական աշակերտ Աղանի մօտ էր ուսել և դասուում է Մեսրոպի կրթութեւ աշակերտի շարքը:


Ահա, այս երեք մատենագիրների տասններիցն ենք հիւսում հետևելու:



Գ.

արօն գաւառի Հացեկաց գիւղիցն էր սբ. Մեսրոպը, որ կոչւում էր նաև Մաշտոց. նրա հօր անունը Վարդան էր: Մեսրոպը մանկական հասակում աշակերտում է Մեծն Ներսէս կաթողիկոսին և սովորում է յունարէն լեզուն ու դպրութիւնը: Ներսէս Մեծի մահից յետոյ պատանի և յունագէտ Մեսրոպը գալիս է Արշակունեաց արքունի պալատը և Խոսրով թագաւորը նրան գինւորական աստիճան տալով՝ արքունի գիւհանում քարտուղարի պաշտօնէ տալիս, որովհետև այն ժամանակ հայոց թագաւորի գործերը՝ վճիռները և հրովարտակները ասորի և յոյն լեզուով էին գրւում: Այդ ժամանակ հայոց աշխարհի հազարապետն էր Առաւանը: Մեսրոպն ընդունակութիւն ցոյց տալով զինւորական արւեստի մէջ՝ շուտով սիրելի է դառնում զօրավարներին: Սակայն Մեծն Ներսէսի դաստիարակութեան ազդեցութիւնը նրա սրտում կրօնական կայծեր էր թողել. զինւորական փայլուն ասպարիզում ևս նա զբաղւում է կրօնական գրքերի ընթերցանութեամբ և մի քանի տարի շարունակ անբիծ վարելով քարտուղարի պաշտօնը՝ թողնում է արքունի իր ծառայութիւնը, զինւորական կեանքը, նոյն իսկ աշխարհիկ կեանքը և վանական դառնում:

Այնուհետև սբ. Մեսրոպն միայնակեաց կեանք է վարում և իր մարմինը ենթարկում զանազան տեսակ շարշարանքի. նրա համբաւը լսելով՝ շատ երիտասարդներ հաւաքւում են նրա շուրջը և աշակերտում նրան: Այնուհետև սբ. Մեսրոպն իր աշակերտներով գնում է Գողթան գաւառը, ուր



Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ



Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

հեթանոսական պաշտամունքը դեռ շարունակ-  
ւում էր: Սբ. Մեսրոպն այս գաւառի իշխան  
Շամբիթի օգնութեամբ կարողանում է վերջ դը-  
նել հեթանոսական կրօնի պաշտմանը և քարո-  
զում է քրիստոնէութեան սկզբունքները: Գող-  
թան գաւառում աջողութեամբ կատարելով ա-  
ռաքելական պաշտօնը, սբ. Մեսրոպն այգտեղից  
գնում է Սիւնեաց աշխարհը և երկրի իշխան  
Վաղինակի օժանդակութեամբ այգտեղ ևս քարո-  
զում ու ժողովրդին հասկացնում է քրիստոնէա-  
կան կրօնի ճշմարտութիւնները:

Այս առաքելական շրջադայութիւնների ժա-  
մանակ նա տեսնում է, որ իսկապէս ժողովուր-  
դը ոչինչ չէ հասկանում եկեղեցու պաշտօնեա-  
ների կարգացածից և ինքը ստիպւած է վնում  
կարդացածը թարգմանել հայերէն, իսկ եկեղեցու  
սովորական պաշտօնեաները չկարողանալով թարգ-  
մանել իրենց կարդացածը՝ իսկապէս աւետարա-  
նի բովանդակութիւնն անհասկանալի էր մնում  
ժողովրդին: Երանելի Մաշտոցը հոգևով տըրտ-  
մում էր, տեսնելով որ հայ երիտասարդները մեծ  
աշխատանքով և ահագին նիւթական կորուստնե-  
րով մաշում էին իրենց կեանքը հայրենիքից  
դուրս՝ ասորոց դպրոցներում, որովհետև հայոց  
եկեղեցու ծիսակատարութիւնը տեղի էր ունե-  
նում ասորոց և յունաց լեզուով, որ բոլորովին  
անհասկանալի էր ժողովրդին: Սբ. Մեսրոպն եր-  
կար ժամանակ մտածմունքի մէջ է ընկնում և  
փորձում, մանաւանդ որ կային հայերէն նշանա-  
գրեր, որոնցով կարելի է սեպհական գրով և լեզ-  
ւով ժողովրդի սիրտը շահել: Նա լուրջ կերպով  
մտածում է վերականգնել հայոց այբուբենը և  
երկար ժամանակ զբաղւում է զանազան փոր-  
ձերով:

Երբ Սահակ Պարթևը կաթողիկոս ընտրւեց,  
Մեսրոպը շտապեց գնալ նոր կաթողիկոսի մօտ  
և յայտնեց նրան իր բազմաժամանակեայ մտա-  
տանջութեան խնդիրը: Սբ. Սահակը յայտնում է,  
որ ինքն էլ վաղուց մտածում է այդ խնդրի մա-  
սին և քաջալերելով նրան ասում է. վերցրու-  
բեզ հետ և ուրիշ օգնական բահանաներ, որոնց  
ես կընշանակեմ: միասին աշխատեցէք. ուր որ  
դժւարանաք վանկերը կարգելիս, բերէք ինձ մօտ  
և ես կուղղեմ, որովհետև շատ հեշտ է քո ցան-  
կացածը գտնել: Սակայն մենք առաջ պէտք է  
թագաւորին իմաց տանք այսպիսի մեծ և կարե-  
ւոր գործի պէտքը: Ոչ շատ ժամանակ առաջ,  
եկեղեցում այդ խնդրի կարևորութեան մասին

խօսելիս մէկն ասել է թագաւորին, թէ մի դի-  
զում մի եպիսկոպոսի մօտ տեսել եմ հայերէն  
նշանագրեր. թագաւորը յիշում էր այդ խօսքերը  
և պատմեց ինձ:

Այս խօսակցութիւնից յետոյ սբ. Սահակը  
ներկայացնում է Մեսրոպին Վրամշապուհ թագա-  
ւորին և պատմում նրա մտադրութեան մասին:  
Վրամշապուհն անձամբ պատմում է, որ երբ ինքը  
Միջագետքում էր գտնւում, Հարէլ անունով մէկ  
բահանայ յայտնեց իրեն՝ թէ իր ազգական Դանիէլ  
եպիսկոպոսն ունի հայոց լեզւին յարմարեցրած  
տառեր. սակայն ինքը, թագաւորն անուշադիր  
է թողել Հարէլի ասածը:

Սբ. Սահակն ու Մեսրոպը լսելով այս  
պատմութիւնը, ուրախանում են և թագաւորին  
շտապեցնում, որ զբազւի այս խնդրով. որովհե-  
տև հայոց աշխարհի համար այդ գիւտը մեծ նը-  
շանակութիւն ունի և իրեն արքային էլ այդ ա-  
ւելի մեծ պատիւ կըբերէ ապագայում, քան թէ  
նրա աշխարհային իշխանութիւնը: Այս խօսքերը  
թագաւորին մեծ բաւականութիւն են պատճա-  
ռում և նա փառաբանում է Աստծուն, որ իր  
թագաւորութեան ժամանակ այդպիսի մի մեծ  
իրողութիւն պէտք է տեղի ունենայ:

Առանց ուշացնելու Վրամշապուհ թագաւո-  
րը Վահրիճ անունով մէկին հրովարտակով ու-  
ղարկում է Միջագետք՝ Հարէլ բահանայի մօտ,  
որ թագաւորին յայտնել էր հայոց այբուբենի  
գոյութեան մասին: Հարէլ բահանան ստանալով  
արքայական հրովարտակը՝ շտապում է Դանիէլ  
եպիսկոպոսի մօտ և անձամբ նրանից սովորելով  
հայոց այբուբենը, ինքը գալիս է Հայաստան և  
այբուբենը յանձնում սբ. Սահակին ու Մեսրո-  
պին: Սրանք հարկաւ ցնծութեամբ ընդունում  
են այբուբենը և թագաւորից իրաւունք խնդրում,  
որ նոր դպրոցներ բանան և հայերէն այբուբենը  
սովորեցնեն աշակերտներին: Վրամշապուհը թոյլ  
է տալիս և սբ. Մեսրոպն երկու տարի շարունակ  
այդ այբուբենի գրերով գրել-կարդալ է սովո-  
րեցնում: Սակայն սբ. Մեսրոպը տեսնելով, որ  
այդ այբուբենի տառերը բաւական չեն հայոց  
լեզւի վանկերն ու կապերը արտայայտելու հա-  
մար, ինքն անձամբ գնում է Միջագետք Դանիէ-  
լի մօտ, բայց նոր բան չըգտնելով այնտեղ՝ գնում  
է Եգիպտոս հեթանոս ճարտասան Պղատոնից խոր-  
հուրդ հարցնելու: Պղատոնն ուրախութեամբ ըն-  
դունում է նրան, բայց ինքն էլ չըկարողանալով  
օգնել՝ խորհուրդ է տալիս Մեսրոպին գիմել Ե-  
պիփանոսին, որ իր նախկին ուսուցիչն էր եղել:

Սբ. Մեսրոպը եղեմիայի եպիսկոպոս Բաքիլոսի  
օգնութեամբ գնում է Փիւնիկէ և այնտեղից Սա-  
մուսատ, որտեղ ապրում էր վախճանաւած Եպի-  
փանոսի աշակերտ Հոռիանոսը: Այստեղ նա եր-  
կար ժամանակ և համբերութեամբ աշխատում է  
իր նպատակին հասնել, այսինքն հայոց այբու-  
բենը կատարելագործել. նրա ջանքերը պակ-  
շում են յաջողութեամբ և իր սուրբ աշուղ մի-  
տր Եւ սրանշնչի ծնունդ է առաջ բերում. ձեռ-  
կերպում է ամբողջ այբուբենի տառերը, նրանց  
անունները, դասաւորութիւնն ու հնչիւնները  
կարգի բերում և լրացնում: Հոռիանոսն այդ  
այբուբենի տառերին փայելուչ ձև է տալիս՝ ու-  
րոշելով նրանց երկարութիւնն ու հաստութիւ-  
նը: Այս գործում սբ. Մեսրոպին օգնում են յու-  
նարէն իմացող իր շորս օգնական քահանաները,  
որոնց անունները հետեւեայներն են: Յովհանն,  
Եկեղեաց, զաւարից, Յովսէփ, Պաղանական  
տանից, Տէր, Թորձէնից և Մուէ, Տարօնից:

Սբ. Մեսրոպն իր օգնականներով վերադա-  
նում է Հայաստան. ս. Սահակը և Վառձապուհ  
թագաւորը ցնծութեամբ դիմաւորում են նրան  
Ռահ գետի մօտ և մեծ պատուով ընդունելով՝ տօ-  
նախմբութիւններ են կազմուս՝ այս նշանաւոր  
իրողութեան առիթով:

Այնուհետև ամեն տեղ զարոցներ են բաց  
անում և բազմաթիւ աշակերտներին նոր գրով  
հայերէն են սովորեցնում. ամեն մարդ ցանկա-  
նում էր հայոց լեզուն սովորել և ասորոց ու  
յունաց լեզուները սովորելու տանջանքից ազատ-  
ւել: Բայց դեռ դժւարութիւն կար, որովհետև  
սբ. գրքի մասերը թարգմանաւ չէին: Սբ. Մես-  
րոպն իր օգնական քահանաներով չէին վստահա-  
նում Աստուածաշունչ գիրքը յունարէնից թարգ-  
մանել, որովհետև այնչափ հմուտ չէին յունա-  
րէն լեզւին: Այս դժւար դրութիւնից դուրս գա-  
լու համար՝ ժողովում են հայոց աշխարհի բո-  
լոր աւագ քահանաները, նախարարները, տանու-  
տէրերը և սբ. Մեսրոպի առաջնորդութեամբ  
գնում են Վառձապուհ թագաւորի մօտ և այդ-  
տեղ բոլորը միասին աղաչում են սբ. Սահակ  
կաթողիկոսին, որ յանձն առնէ Աստուածաշունչ  
գրքի յունարէնից—հայերէն թարգմանելու ծանր  
աշխատանքը: Աւագ քահանաներն ասում են սբ.  
հայրապետին՝ սբ. Մեսրոպը կարգի է բերել ար-  
դէն վաղուց գրեւծ հայերէն տառերը, որի գոր-  
ծադրութեան համար սչօք չէր հոգացել և իղուր  
և անօգուտ աշխատանք էին թափել ասորոց լե-

զո՛ւնը մտօրեցում. ժողովրդի մեծամասնութիւնը  
եկեղեցւոց դուրս էր գալիս առանց բան հաս-  
կանալու, իսկ ուսուցիչները յոգոց հանելով և  
հառաչելով զգջում էին իրանց դուր աշխատան-  
քի մասին, որովհետև տեսնում էին, որ ժոյո-  
վրդից ոչոք օգուտ չէր քաղում իրանց հոգեօր  
խրատներից. այսպէս տեսց, մինչև որ գանւեց  
գիրը: Սբ. ինչպէս որ սբ. Գրիգոր Լուսաւորի-  
չը մեր երկիրը բուսաւորեց բրիտաննէական լու-  
սով, քեզ է վերապաւաճ, իբրև նրա շատաւի-  
ղին, լրացնել քո նախնորդի թողած պակասը,  
Աստուծոյ խօսքը, հասկանալի դարձնելով ժողո-  
վրդի համար, դու պէտք է թարգմանես սուրբ  
գիրքը, որովհետև այդ բանը, բացի բեզանից, ս-  
չոր չի կարող անել Հայաստանում:

Սուրբ Սահակը լսելով թագաւորի, սուրբ  
Մեսրոպի և մեծամեծների խնդիրը, հոգով ու-  
րախանում է և խոստանում՝ կատարել այդ գոր-  
ծը. այնուհետև նա գիշեր ու ցերեկ զբաղւելով  
թարգմանում է հին և նոր կտակարաններն ու  
մարգարէից գրքերը:

Այս մեծ գործը զուխ բերելով՝ սբ. Սահա-  
կը կարգադրութիւն է անում բազմացնել զբո-  
լոցների թիւը ու հայոց լեզուով աւանդել և ու-  
սուցանել Աստուծոյ կենդանի խօսքը: Ծաղովուր-  
դը սկսում է մեծ բազմութեամբ եկեղեցի յա-  
ճախել՝ հայերէն լսելու սուրբ պաշտամունքը և  
զիտակցաբար ըմբռնելու սուրբ արարողութիւն-  
ները: Եկեղեցիները պայծառանում են, շատա-  
նում է բարոգիչների թիւը, որոնք ժողովրդին  
մայրենի լեզուով մեկնում են սբ. գիրքը և հո-  
գեւոր մխիթարութիւն տալիս նրան:

Այնուհետև սբ. Մեսրոպը նորից սկսում է  
իր նախկին պաշտօնը, քարոզում է նոր այբու-  
բենով. նախ գնում է Մարաց կողմերը, յետոյ  
Գողթան և Սիւնեաց աշխարհը:

Սուրբ Մեսրոպը տեսնելով՝ թէ որչափ բա-  
րեբար ազգեցութիւն է անում ժողովրդի հոգե-  
կան կրթութեան վրայ մայրենի լեզուով ու գրով  
աւանդած բրիտաննէութիւնը, բուն բրիտաննէա-  
կան ոգով վստաւած՝ մտածում է նաև հայոց դրա-  
ցի և հաւատակից ազգերին այգպիսի մխիթարու-  
թիւն պատճառել: Անձամբ գնում է Վրաստան,  
ներկայանում է վրաց Բակուր թագաւորին և իր  
միտքը յայտնում նրան: Բակուրը պատուով ըն-  
դունում է նրան և ամեն յարմարութիւն տալիս  
Այնուհետև սբ. Մեսրոպը վրացի Շաղաքի օգ-  
նութեամբ կազմում է վրացերէն լեզւի այբու-

բենը և նրանց էլ միջոց տալիս՝ իրանց մտաբերի լեզուով ու գրով ուսուցանելու գալրոցներում քեկեղեցիներում: Յետոյ իր աշակերտներից երկուսին թողնելով Վրաստանում, ինքը գնում է Աղանք ու նրանց թագաւոր Արաւաղէնի և եպիսկոպոսապետ Երեմիայի օժանդակութեամբ ժողովում է աշակերտներ և ուսուցանում: Այստեղ ևս որ. Մեսրոպին աջողուում է Բենիամին հմուտ թարգմանի օգնութեամբ՝ աղանից լեզւի այբուբենը կազմել: Այս փորձի աջող հետեանքներն էլ տեսնելով՝ իր աշակերտ Յովնաթանին թողնում է Աղանից երկրում սկսած գործը շարունակելու, իսկ ինքը վերադառնում է Հայաստան:

# Ե

Դ.

Րբ պարսից բաժնի Հայաստանում այսպէս աջող տարածում էր հայոց նոր գիրն ու դպրութիւնը, յունաց բաժնի Հայաստանում երկրի կառավարիչներին արգելում էին հայերէն գրի գործադրութիւնը: Սբ. Սահակն այդ խոչընդոտն էլ վերացնելու նպատակով որ. Մեսրոպին և իր թուր Վարդանին ուղարկում է Բիւզանդիոն երեք նամակով: Նամակներից մէկն ուղղւած էր Քէոզոս կայսրին, երկրորդը՝ Առաիկոս եպիսկոպոսին, իսկ երրորդը՝ Անատոլիոս զօրավարին:

Քէոզոս կայսրին ուղարկւած նամակի մէջ որ. Սահակը զանգատում է յունաց բաժնի Հայաստանի կառավարիչներից, որ իբնն արժանավայել ընդունելութիւն չեն ցոյց տւել և այնքան ատելութեամբ են վերաբերել, որ մինչև անգամ սբ. Մեսրոպի կազմած այբուբենն էլ չեն թոյլ տւել գործադրել. վերջը խնդրում է կայսրից, որ հրամայի Յունա-Հայաստանի կառավարիչներին, շքնուրուխդ զմեզ և զվարդապետութիւնս մեր: Բիւզանդիոնի նամակներում սբ. Սահակը Մոսրոպին տնւանում է մեր ուսուցիչ և մեր աշխարհի ուսուցիչ նշանաւոր տիտղոսով: Բիւզանդիոնում դեսպանութիւնն ընդունում է կայսեր կողմից մեծ պատուով և վերադառնում Հայաստան՝ կայսեր և Ատտիկոս եպիսկոպոսի նամակներով:

Քէոզոս երկրորդ կայսրը Սահակ Գարթնին գրած պատասխանի մէջ յանդիմանում է կաթո-

ղիկոսին՝ թէ ինչո՞ւ է միացել պարսից թագաւորի հետ և մանաւանդ թէ թրհամարհելով յունաց գիտնականներին՝ ասորաց է դիմել տառերի գիւտի համար. այդ պատճառով էլ, ասում է կայսրը, ես համաձայն էի, որ իմ պաշտօնեաները արհամարհեցին և թրգելեցին նոր գրքերի մուտքը Յունա-Հայաստանում: Բայց որովհետև Մեսրոպը պատմեց մեզ՝ թէ այդ գիւտը Աստուծոյ շնորհիւ եղաւ, գրեցինք մեր պաշտօնեաներին, որ թոյլ տան նորագիւտ գրով ուսուցանելու և Քեզ էլ պատուով ընդունելու...: Քեզ պատուելու համար՝ Վարդանին Ստրատելատ կարգեցինք, իսկ Մեսրոպին առաջնակարգ վարդապետների կարգը դասեցինք:

Ատտիկոս եպիսկոպոսն ևս իր կողմից յանդիմանում է որ. Սահակին, որ նա տառերի գիւտի համար փոխանակ Բիւզանդիոն դիմելու և Յովհան Ոսկերեանից խորհուրդ հարցնելու, ասորական գիտնականներին է դիմել. սակայն նոյնպէս ուրախութիւն է յայտնում, որ վերջը հոգւոյ շնորհիւ է տեղի ունենում այբուբենի գիւտը, և յայտնում է, որ կայսեր հրամանով իրաւունք է տրւում սբ. Սահակին՝ նոր դպրութիւնն ուսուցանելու Յունա-Հայաստանում:

Այս թոյլտուութեան հիման վրայ սբ. Մեսրոպը վերադառնալով յունաց բաժնի Հայաստան, անմիջապէս ամեն տեղ դպրոցներ է բաց անում և նոր այբուբենով գրել-կարդալ սովորեցնում: Մէկ գաւառում աջողութեամբ առաջ տանելով գործը՝ իր աշակերտներին կարգում է տեսուչներ, իսկ ինքը գնում է մի ուրիշ գաւառ՝ նոյնը շարունակելու:

Միւս կողից առաջ էր դնում թարգմանութեան գործը. Յովսէփ և Եզնիկ Կողբացի աշակերտներն ուղարկւում են Միջագետքի Եդեսիա քաղաքը, որպէսզի սուրբ հարց գրւածքները թարգմանեն հայերէն և ընթեն. որանք նամակներ ստանալով, թէ սբ. Սահակը և Մեսրոպը ուրիշներին պէտք է Բիւզանդիոն ուղարկեն նոյն նպատակի համար, անմիջապէս թողնում են Եդեսիան և ուղևորւում Կ. Պոլիս: Սբ. Մեսրոպի Ղևոնդ և Կորիւն աշակերտները բարի նախանձով լցւած դէպի իրանց ընկերները, իրանք ևս շտապում են գնալ Բիւզանդիոն նրանց մօտ. նոյնն են անում և Յովհան ու Արձան աշակերտները, որանք վաղուց ուղարկւած էին, բայց Կեսարիայում թնալով՝ ուշացել էին: Սրանք բոլորն էլ սիրով ընդունւում են Բիւզանդիոնում և ու-

սուձնասիրելով յաւնարէն լեզուն ու գրականութիւնը՝ թարգմանութեամբ են պարագում:

Նփեսոսի ժողովից յետոյ, երբ մեր թարգմանիչները վերագտնում են Բիւզանդիոնից, իբրանց սուտեցիչներին, սբ. Սահակին և Մեսրոպին, գտնում են Տարօնի Աշտիշատում և ներկայացնում են ժողովի կանոններն ու սբ. գրքի ստոյգ օրինակները:

Այսպիսով այբուբենի գիւտով ամբողջ Հայաստանում մի նոր կեանք է սկսւում. թէ մանուկները և թէ չափահասները սովորում են իրենց մայրենի լեզուն և վերջինիս ժիշոցով հասկանում սւ կարդում են եկեղեցական գրքերը: Գրական շարժումը մի նոր ոգի է առաջացնում ազգի մէջ և բոլորն էլ միահամուռ ձգտում են հոգևոր միութեան. ազգային գաղափարը կենդանութիւն է ստանում և քաղաքականապէս երկուսի բաժանւած երկրում ու ժողովրդի մէջ հաստատուն միութեան կապ առաջացնում, որի տնտեսականութիւնը շուտով պէտք է երեար: Ասորական ազդեցութիւնն ու դպրութիւնը հետզհետէ տեղի է տալիս, ուելանում է յունական դպրութեան ազդեցութիւնը, բայց այս հանգամանքը այլ ևս վտանգաւոր չէր կտրող լինել. ազգային գիրն ու գրականութիւնը սբ. Սահակի և Մեսրոպի տաղանդաւոր աշակերտների շնորհիւ շուտով արիւն ու մարմին դարձաւ հայ ժողովրդի համար, այս պատճառով և յունական գիտութիւնը միմիայն ազգային գրականութեան բարգաւաճմանը կարող էր ծառայել:

Սբ. Սահակ Պարթևը յիսուն եւ մէկ տարի բեղմնաւոր կերպով վարելով կաթողիկոսական ծանր պաշտօնը՝ քաղաքական շատ դժւար հանգամանքներում յաւերժա յիշատակ անուն թողեց նաև հայոց մատենագրութեան մէջ՝ ամեն կերպ նպաստելով և մասնակցելով՝ թէ նոր այբուբենի կազմակերպութեանը և թէ սբ. գրքի թարգմանութեանը: Հայ եկեղեցին նրան սրբերի դասը կարգեց և հայ ժողովրդին էլ իր անմահ որդոց մտածանի մէջ ոսկէ տառերով գրուեց Սահակ Պարթևի անունը:

Սբ. Սահակը վաթճանկեց 438 թ. նաւասարդ ամսի վերջին օրը, իր ծննդեան տարեդարձին: Նաւասարդը մեր նախնեաց հաշուով տարւայ առաջին ամիսն է և համապատասխանում է օգոստոս ամսին:

Ամբողջ հայութիւնը դառնապէս սզալով իր հանճարեզ և մեծ կաթողիկոսի մահը՝ արքայա-

կան պատիւներով թաղում է նրա թանկագին աճխնը Աշտիշատում. որ կաթողիկոսական կալւածք էր:

Հայաստանի այդ լուսաւորիչ աստղի ընկնուց յետոյ կաթողիկոսական տեղապահ է կարգւում սբ. Սահակից յետոյ հայութեան ամենամեծ հեղինակութիւն ունեցող հոգևորականը, սբ. Մեսրոպը: Սահայն հողիւ վեց ամիս անցաւ և անա ընկաւ նաև երկրորդ պայծառ լուսատուն, հայ աշխարհի ուսուցանող սբ. Մեսրոպը, որի մտաին մեր մեծ պատմաբանը, Մովսէս Խորենացին ասում է. «գերազանցեց այն ժամանակի բոլոր առաջինի մարդկանցը»:

Սբ. Մեսրոպը վաթճանկեց Վաղարշապատում, մեհեկան ամսի 13-ին. մեհեկանը համապատասխանում է փետրւարին:

Սուրբ վարդապետի աշխարհային ձայնարդներն ամփոփելու համար վէճ է ծագում. ամանք ուզում են նրա նշխարները թաղել իր ընագաւառ Տարօնում, ամանք Գողթն գաւառում, ուր նա բարեգէլ էր առաջին անգամ, ամանք էլ ուզում էին Վաղարշապատում թաղել. բայց յողթն է հանդիտանում հայոց աշխարհի հազարապետ Վահան Ամատունին, որ սրբի մարմինը շքեզ հանդիսաւորութեամբ տանում է իր սեպհական Օշական գիւղը և այնտեղ գտնին յանճնում:

Թէ որչափ առաջինի և սուրբ մարդու հրուշակ էր վայելում սբ. Մեսրոպն իր ժամանակակիցների մէջ, պարզ երևում է Մովսէս Խորենացու այն վկայութիւնից՝ թէ արօտ խաչի նշանով լոյս շողաց այն տան վրայ, ուր երանելի հոգին աւանդեց և Օշականի ճանապարհին լուսոյ այդ շողը շարունակ դազողի վրայ էր, մինչև գերեզման իջնելը:

Օշական գիւղը, ուր ամփոփւած է սբ. Մեսրոպի մարմինը, գտնւում է Էջմիածնից դէպի հիւսիս, մօտ երկու ժամ հեռաւորութեամբ Վաղարշապատից. Մայր Աթոռի սեպհական կալւածական գիւղերից մէկն է և մօտ 300 տուն բնակիչ ունի: Սբ. Մեսրոպի գերեզմանի վրայ հայոց հազարապետ Վահան Ամատունին մի հոյակապ եկեղեցի էր կառուցել, 1639 թ. նորոգեց Ֆիլիպոս կաթողիկոսը: Իսկ այժմեան փառահեղ, սրբատաշ քարից շինած, առճարը կառուցեց երջանկայիշտաակ Գէորգ Դ. կաթողիկոսը՝ 1879թ.: Եկեղեցու սեպանի վէմ քարի տակ գտնուող այբի մէջ է ամփոփւած սբ. Մեսրոպի, մեր ազգա-

յին գրի ու գրականութեան հիմնադիր խնկելի անհիւնը:

Տասն և հինգ դար շարունակ սրբան արցունք է թափել այդ սուրբ հողակոյտի վրայ, սրբան սիրտ յուզել, սրբան ծունկ չորել և սրբան շրթունքներ են շփել այդ ամբողջ հայութեան հետ անքակտելի կերպով կտարած, անմոռանալի շիրիմին: Արչափ տարբեր զգացմունքի արտայայտութիւններ են եղել այդ արցունքները՝ նայելով թէ ո՞ր դարում և ի՞նչ ժամանակ են ցօղել դրանք սրբի դամբարանը. կայ արցունք ուրախութեան և ցնծութեան, կայ և՛ վշտի ու թշւառութեան:

Սբ. Մանակի և Մեսրոպի անունները հինգերորդ դարի սկզբից մինչև մեր օրերը անբաժան մնաց հայ գրականութիւնից և դարձեալ անբաժան կը մնայ, մինչև որ վերջին հայն հայկերէն «ար»-ով կրփչէ իր վերջին շունչը:

Իս. Յարութիւնեան



Վասպուրականի Արիւծը Օշականում.

### ՀԵՏՈՑ ԽՐԻՄԵՆ ԷՆՏՐԻԿԸ ՕՇԱԿԱՆՈՒՄ

Վանդոյժի, Հայդուժի արիւն-արտասուքով թաթախած փայլուն գրչի հեղինակ Հայոց Վեհափառ Հայրիկը ս. Մեսրոպի Օշական այգում մտքով թռել է իր Վասպուրականը...

Վասպուրականի Արծիւը մտորում է վերածնել Մեսրոպի դարը:

Հայոց հայրենասէր կաթողիկոսի մտորումները

դարաւոր այս կաղնին է միայն ըմբռնում. բայց այդ վիթխարի կաղնին էլ յանկարծ զետին է տապալում, երկնքին համող զագաթը լսոնարհում երկրին և կարծէք ծնրաչոր ինքն էլ մեռնում, հէնց այն օրն ու ժամին, երբ անվահներ Վասպուրականի Արծիւը երկինք է սաւառնում:

Ես այս առասպելչէ, այլ փաստ ու իրողութիւն:

Եւ զեւ տում են, թէ մեր օրերում հրաշքներ չեն կատարւում:

Բացատրեցէք ընութեան այս գաղանիքը. Բացատրեցէք այս զուգատիպութիւնը:

Իսկ մինչև ընութեան հրաշալիքների ու գաղտնիքների բացատրելը, եկէք իրականացնենք հայրենասէր Հայոց Հայրիկի մը տորումները, եկէք ընկած դարաւոր կաղնու տեղը կառուցանենք մի լուսատու փարոս:

S.



### ՕՇԱԿԱՆ ԳԻՒՂԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍԵՐԱՆԸ

Աջ ծայրին ս. Մեսրոպի գերեզմանը, որի վրայ կառուցւած է հոյակապ եկեղեցին:

Գիւղն ունի մօտ 300 տուն:



## Պ Ա Ն Ծ Ա Լ Ի Ն Ա Խ Ն Ի Ք

Արևելքի հին ազգերի մէջ փոքր սզգ ենք համարուել, բայց մեր մէջ չի եղել են մեծագործ անձեր, գալափարների հերոսներ, անարիւն ու արիւնտու նահատակներ, որոնց իշատակն անմեռ, գործերն անմահ, ունչը ոգևորիչ ու կենդանարար են յղել ազգի համար զարէ դար:

մարդասէր, ազատական գաղափարների մարմնացնող, ուրուկների համար՝ ուրկանոցների հիմնադիր, աղքատների համար աղքատանոցների շինարար ձեռք, որը ու այրիների համար՝ որբանոցների կազմակերպող, պանդուխտների և ճամբորդների համար վանքերի և օթևանների կառուցանող, հայ եկեղեցու ծիսականն ու քարոյականը կազմակերպող և իրաւամբ Մեծ անունը ժառանգած յետնորդ դարերից, գաղափարի նահատակներից մեծագոյններից մինը: Եւ նա, որ իւր հայրենիքին անմահութեան շունչ փչեց, անարժան թագաւորի ապերախտ ներշնչումով թունամահ եղաւ անարգ դաւադրի ձեռքով: «Տխուր դէպք մը, որուն ամօթը՝ դարուց հեռաւորութիւնը չէ կորցած փարատել» ասում է մի բանասէր: Սակայն իր մարգարէներին կոտորող, առաքեալներին քարկոծող ազգ չար և վատը՝ անկարող եղաւ Մեծն Ներսէսի պանծալի անունն ու գործերը սպանել, որոնց շողերը ընկնում են դարերի և մեզ վրայ Գ-րդ դարու հեռաւորութիւնից:

Գլուխն է սա կրտսեր թարգմանիչների աստղարոյլ խմբի: Աղէքսանդրիայի, Աթէնքի, Բիւզանդիոնի բարձրագոյն վարժարանների և դիւանների մեղուաջան ուսանողն ու պիտունը: Երբ Հայաստան վերադարձաւ, մեռել էին իր մեծ ուսուցիչները՝ Ս. Ս. Սահակ ու Մես-



ՄԵԾՆ ՆԵՐՍԵՍ ՊԱՐԹԵՒ

Ներսէս Մեծ. Պարթևական սըրտազնագոյն կաճառի մէջ մի շողարկակ դէմք. իր պապի՝ Մեծ Լուսաւորչի պէս հաւատով հօր, այլ աւաւել հայրենաշունչ ու հայրենասէր: Ժամանակակից անարժան հայ թագաւորի արատաւոր գործերի արդար դատաւոր ու սաստիչ, պառակտուած նախարարների խրատիչ, երկիցս Հայոց թագաւորների խորտակուած գահը վերականգնող: Հայ ժողովրդի խկական հայր ու անմահ հայրապետ: Քրիստոնէական

Մովսէս Խորենացի. Ս. Սահակի և Ս. Մեսրոպի հոգուց ծնած, սըրտիցը բեկուած լուսագոյն աշակերտը, Հայոց ազգի անդրանիկ պատմութեան հայրն ու հեղինակը, հանճարեղ հիմնադիրը հայ ազգի ինքնաճանաչութեան, «Հայոց աշխարհի լոյսն ու փառքը», Հայ ազգի ցաւոտ օրերի աղեկաւոր ողբերգակը անարժաններին դատող մըտրակը:



ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱԿԻ

րոպէ Նրանց գերեզմանի վրայ ընկած սրտաբեկ հառաչանքով ողբաց հայ զոյգ լուսաւորների հանգչիլը. «աւանդ զրկանացս, աւաղ թշուառական պատմութեանս.»  
 Իր անմահ ընկերների հետ հալածուեցաւ տղէտ հոգևորականներից, «ստախոս արեղաներից», որոնց ձեռքից ազատուելու համար, ինչպէս աւանդութիւնն է ասում, անյայտութեան մատնեց իրեն, մութացկան դարձաւ խորը ծերութեան օրերում. ցերեկները մախաղն ու-

սին գեղեգեղ շրջում հաց ու ձէթ էր մուրում, գիշերները լերան մի այրում ձէթի ճրագի լուսով «Հայոց պատմութիւնն էր գրում»:



Մակայն նախանձոտ ու քինախնդիր սուտ հոգևորականների հալածանքը չարատաւորեց Թորենացի Մովսէսին, որ ցայսօր Երզնկայրու սոկեղէն գրականութեան ծաղկավառ դաշտից ժպտում է ամէնմի գիտակցող հայի:

**Անանիա Ծիրակացի.** Էրզրու դարձարող մեծ գիտնական, երգակի թուազէտն (մաթեմատիկոս) ու աստեղագէտը, ականաւոր Տիրիկոս «մեծ վարպետի» արժանաւոր աշակերտը, որ իր հայրենիքում թուական գիտութիւնները տարածող մեծ ուսուցիչն եղաւ, որին իր արժանաւոր մեծ նախնեաց նման հայը դռն ապերախտութեամբ վարձատրեց: «Թէպէտ և ոչ որ եղև շնորհակալ իմոց աշխատութեանս, ասում է նա, զի ոչ իրեն Հայքս իմաստ կամ գիտութիւն, այլ ծոյլք են և ձանձրացողք»:

**Գրիգոր Նարեկացի.** Ո՞վ չէ լսել այդ հոգեշունչ անունը, որ հայ գիւղացին է, որ Ժ-դ դարից ցայսօր ուխտի չի քնացել Նարեկացու ուխտատեղին, մոմ չի վառել «Ս. Նարեկի» այդ սքանչելի աղօթագրքի առաջ, արցունքներով ու յուսով չի կանչել Ս. Նարեկացի դու իմ մուրազը ասա:

Անձևացեաց Թորով եպիսկոպոսի որդին Գրիգոր ծնաւ 951 թուականին, Նարեկայ վանքի իմաստուն առաջնորդ Անանիա վարդապետին աշակերտեցաւ: «Այնտեղ իր վարքի որբութեամբ ու անարաբազաւարութեամբ նա մի մարմնաւոր հրեշաակ երևաց, իսկ իր գիտութիւնովն ու հանճարովը ժամանակի ամենա-

յայտնի հանճարներից մինը, ասում է բանասէրը:

Բացի իր նաշխարհիկ «Նարեկից», որի մէջ փայլում է որպէս ինքնամոկուման, կրօնական մասնորոշեան մեծ փիլիսոփայ, անօրինակ հոգեբան, սքանչելի բանաստեղծ, նա գրել է «Ապարանից խաչի պատմութիւնը», Աստուածածնի ներբողը, «ճառի գովեստ Առաքելոց» «ի Սուրբ Յակոբն», «Երգերգոցի մեկնութիւնը» և այլն:

Գանի մեծ է հանճարը, այնքան հզօր տգէտների նախանձն ու ատելութիւնը: «Նարեկացու հանճարն ու սրբութիւնը իրեն դէմ հանեց ժամանակի տգէտ ու ինքնահաւան գլուխները, որոնք մինչև Անի գնացին կաթուղիկոսին բողբոջելու, Նարեկացուն ամբաստանելու, նրա միաբանասէր եռանդը յանցանք համարելով»: Սակայն հանճարն ու անարեւութիւնը մարդկային շարու-



թեամբ չեն բժաւորում, ամօթապարտ շարերը միայն խղճահարութիւն շահեցան իրանց սև հոգիների համար:

**Ներսէս Լամբրոնացի.** Ազնուական արիւնից սերուած ու ազնիւ, լամբրոնի Օշին Իշխանի և Ներսէս Ծնորհագու եղբոր աղջկայ՝ բարեպաշտ Ծահանդիստի որդին, այնքան գեղեցիկ ու վայելուչ մարմնով, նոյնչափ պերճ մտքով ու հոգով, որոնց շնորհիւ Բիւզանդիոնի կայսեր, Անտիոքի իշխանի ուշադրութիւնն էր գրաւել: Ուսաւ ժամանակի բարձրագոյն ուսումները, բայց իւր ծնուպց և աշխարհի փառքից երես դարձնելով Սիւրայ վանքը մտաւ, վանական դարձաւ, իր հանճարի ոյժովը 23 տարեկան հասակում Տարսնի եպիսկոպոսութեան աստիճան ստացաւ մեալով և Սիւրայ վանքի առաջնորդ:


Իր կեանքը գրաւոր երկատիրու-

թեանց նուիրեց, որոնց քանակն ու որակը հիացմունք շարժեցին ժամանակի հայութեան և օտար գիտնոց մէջ: «Ատենաբանութիւնը» «Պատարագի Մեկնութիւնը», Սուրբ գրքի բազմաթիւ մասերի «Մեկնութիւնները» «Ճառերը» «Բերթոզական գրածքները», «Ս. Գրիգոր Նարեկացու վարքը» «Ուրի Պորհուրդների մեկնութիւնը» և այլն, ահա այն անխորտակելի յուշարձանները, որ Լամբրոնացին իր անմահութեան համար կանգնեցրաւ իր հանճարովը:

Նախանձի չար լեզուից ազաւ չմնաց և Լամբրոնացին: Նրա վրայ բողբոջեցին թագաւորին, կամենալով զրկել տալ նրան պաշտօնից, լռեցնել նրա կայծակնացայտ լեզուն: Բայց այդ շնորհանոս լեզուն և Լամբրոնացու անմեղութիւնը կարողացան ջախջախել ծառայած բանասարկութիւնը և էլ տելի տաւելի դարձնել ստոր հոգիները:

Ահա այն պանծալի նախնիք, որոնց պատկերների շուրջը իրենց մեծ գործերից հիւսած զսակը գրի թոյլ ու հակիրճ խօսքերով: Որոնց մէջ Լուսաւորչի հուստն է փառուել, Յիսուսի մարդասիրութիւնն է բորբոքել, Ս. Սահակի ու Մեսրոբի հայրենասիրութիւնն է հրդեհել ու ջերմութիւն տուել ցուրտ տգիտութեամբ կարկամած հայութեանը:

Իցիւ թէ հայութիւնս լամ հայ եկեղեցին մեր բոլոր պանծալի նախնեաց պատկերները մտացութիւնից ու փոշիներից հանէր, նըրանց շուրջը, նրանց մեծ գործերի նկարագրութիւնը դնէր ու հայ տըների սեղանի վրայ դնէր, որ հայութիւնը գիտակցէր, տաքանար ու



ինքզինքը չարհամարէր օտար մթթին գաղանաշատ անտանների ճամփան րոնելով:

Բննիկ վարդապետ.





Բ. Նկ. Ե.

ասել նաև երկաթագրի մասին. է. դարը հայ ճարտարագետական արևեստի զարգացման լուսագոյն շրջաններից մէկն է. այդ դարից մնացած արձանագրութիւններն էլ իրենց գեղեցիկութեամբ և կանոնաւորութեամբ գերազանցում են Բ. Թ. և Ժ. դարու սկզբներին արձանագրութիւններին, որքան էլ վերջիններս քիչ լինեն համեմատութեան համար. երկաթագրի գործածման հայրենիքը Հայաստանն է, իսկ բոլորագրինը՝ Կիլիկիան: Այստեղ հայ թագաւորներն ու իշխանները, կաթողիկոսներն ու եպիսկոպոսները հովանաւորել են

(Նկար ա. Բ.), որ գործադրում է ձեռագիրների մէջ մինչև ԺԳ. դարը ներկայ տպագրութեան գլխատառերը: Երկաթագրի միւս տեսակներն են միջին (Նկար գ.) և փոքր երկաթագիրները (Նկ. դ.) իրենց պէսպիսութիւններով: Հին արձանագրութիւնների գիրը սովորաբար խոշոր կամ Մեսրոպեան երկաթագիրն է, բայց կան նաև անցման բոլորագրով և շեղագրով արձանագրութիւններ:

Բ. Նկ. գ.

Նշանաւոր նկարիչ և գրիչ Թորոս Թուխնի ձեռքը: ԺԲ. դարու կէսերից արդէն երկաթագիրը տեղի է տալիս բոլորագրին, (Նկ. Ե. գ. է.), որ, ինչպէս վերև նկատեցինք, ներկայ տպագրութեան գիրն է և կատարելագէտ տիրապետող է դառնում ԺԳ. դարում: Նոտրագիրը (Նկ. Ը.) գործադրել է սկսում ԺԳ. դարից, բայց ոչ երբէք այնպիսի ընդարձակ ծաւալով, ինչպէս բոլորագիրը: Գրքերի մէջ ամենից քիչ ընդունելութիւն է գտել շեղագիրը (Նկ. Թ ժ.), որ մեր ներկայ սովորական գործածութեան գիրն է, համեմատաբար աւելի դիւանական թղթերում. անճատական

Նկ. Թ.

գրչութեան և նրա հետ կապւած մանրանկարչական արեստը. այդ շրջանի լուսագոյն ձեռագիրները բարձրաստիճան անձանց սեպհականութիւն են մեծ մասով: Հայ գրի տեսակները չորսի կարելի է բաժանել. երկաթագիր, բոլորագիր, նոտրագիր, և շեղագիր, իւրաքանչիւր ստորաբաժանումներով և անցման շրջաններով: Երկաթագիրը հայ գրի խոշոր տեսակն է

Նկ. Ժ.

խշատակարաններում, հազագիւտ դէպքում նաև արձանագրութիւնների մէջ: Ռուբինեանց իշխանների և յետին շրջանի կաթողիկոսների դիւանական թղթերն ու կոնդակները զրւած են շեղագրով կամ նոտրագրով:

Գարեգին վաղապետ

Նկ. Ը.

# ԴԱՅԻՆ ՄԵԾ ՅՈՒԵԼԵԱՆ

ՆՈՐԻՆ ՎԵՋՍՓՈՒՌՈՒՄԻՆ

Տ. Տ. ԳԵՈՐԳ Ե.

ՍՐԲԱՅԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
ՀՈՂԱՆԱՌՐՈՒԹՅԱՄԲ ԵՒ ԹՈՅԼՏԻՈՒԹՅԱՄԲ

Մ ր ա զ ի ր

ՏԱՌԵՐԻ ԳԻՒՑԻ 1500-ՆՄԵՆԿԻ ԵՒ ՏՊԵՐՈՒԹԵԱՆ 400-ՆՄԵՆԿԻ  
ՏՕՆԱԿԱՏՐՈՒՄԻՆ

## Տ Օ Ն Ա Կ Ա Ր Գ Ը

Ս. ԷՋՄԻՍՆՈՒՄ

Ուրբաթ՝ հոկտեմբերի 11-ին, երեկոյեան ժամը 5-ին, Նորին Վեհափառութիւնը պատգամաւորների և ամբողջ միաբանութեան ուղեկցութեամբ՝ հանդիսաւոր թափօրով իջնում է Մայր Տաճար՝ ներկայ լինելու ս. Թարգմանչաց յիշատակին կատարելիք նախատանակին:

Շաբաթ՝ ս. Թարգմանչաց տօնին, հոկտեմբերի 12-ին, առաւօտեան ժամը 8-ին հանդիսաւոր երթ Նորին Վեհափառութեան Տ. Տ. Գեորգ Ե. Կաթողիկոսի Օշական ուղեկցութեամբ ամբողջ միաբանութեան և պատգամաւորների:

Պատարագ (ժ. 10-ին) ս. Մեսրոպի գերեզմանի վերայ:

Հոգեհանգիստ գրի և տպագրութեան վաստակաւորների յիշատակին, պատգամաւորների բանախօսութիւններ:

Ճաշ (ժ. 2-ին), ուղերձների ընթերցում:

Կիրակի՝ հոկտեմբերի 13-ին, ժամը 9-ին, Մայր Տաճարի Իջման սեղանի վրայ հանդիսաւոր պատարագ և ապա Հայրապետական մաղթանք:

Պատարագից յետոյ՝ ժամը 12-ին ձեմարանում ցերեկային երգեցողութեամբ և երաժշտութեամբ:

Ճաշ՝ ժամը 3-ին, հեռագրերի ընթերցում:

Ծանօթ. Շաբաթ և կիրակի երեկո-

Շաբաթ և կիրակի երեկոյեան ժամը 7-ին և երկուշաբթի առաւօտեան 10-ին՝ ձեմարանում գիտական բեֆերատներ և խորհրդակցութիւն ուղղագրութեան խնդիրների շուրջը:

### ՀԱՅՈՑ ԲՈՂՈՐ ԹԵՄԵՐՈՒՄ

Շաբաթ, հոկտեմբերի 12-ին, ս. Թարգմանչաց տօնի օրը՝ և կեղեցական դասի, պարոցական ամբողջ կազմի, և ազգային հաստատութիւնների ներկայացուցիչների և աշակերտութեան ներկայութեամբ՝ հանդիսաւոր պատարագ և բացատրութիւն երկու մեծ տօնների պատմական նշանակութեան:

Հոգեհանգիստ գրի և տպագրութեան արեւտի վաստակաւորների յիշատակին:

Կիրակի՝ հոկտեմբերի 13-ին, հանդիսաւոր պատարագ և ապա Հայրապետական մաղթանք նոյն կազմով:

Նոյն օրը՝ տեղական պայմաններին նայելով, կազմակերպել գրական և երաժշտական ցերեկային կամ երեկոյթ՝ եկեղեցական և այլ ազգային հաստատութիւնների պաշտօնատար անձանց ներկայութեամբ: Հանդէսը բանայ «Հայր մեր»-ով և ս. Թարգմանչաց կամ ս. Էջմիածնի շարականով:

Ծանօթ. շաբաթ և կիրակի երեկոյեան կենդանութեամբ եկեղեցական հանդէսները կարող են կատարել մի կամ մի քանի եկեղեցիներում տեղական



# ԵՐԱԳԻՐ ՏՕՆԱԿԱՏՐՈՒՄԻՆ

Թ Ի Յ Լ Ի Ս ՈՒ Մ

1. Հոկտեմբերի 6-ին քաղաքիս բոլոր հայ եկեղեցիներում ս. պատարագից յետոյ կը լինին քարոզներ տղզային մեծ տօնի մասին:

2. Հոկտեմբերի 11-ին քաղաքիս բոլոր հայ գրող-բողոքներում դասաւանդութիւնը աւարտում է 3-րդ դասից յետոյ, ապա ուսուցիչները բացատրում են ամբողջ աշակերտութեան մեծ տօնի նշանակութիւնը:

3. Հոկտեմբերի 12-ին ս. Թարգմանչաց տօնին Վանաց աւագ եկեղեցում մատուցում է ս. պատարագ քաղաքիս ամբողջ հոգևոր դասի ներկայութեամբ: Պատարագից և Աշոտ եպիսկոպոսը: Պատարագից յետոյ կը կատարուի հոգեհանգիստ Հայ գրի և տպագրութեան վաստակաւորների յիշատակին: Եկեղեցում ներկայ են լինելու քաղաքիս բոլոր հայ և պետական գրող-բողոքների աշակերտութիւնը և հայ ուսուցչական դասը: Հրաւիրում են ներկայ լինել հայ ազգային և կուլտուրական հաստատութիւնները, հայ վաճառականութիւնը, արհեստաւոր դասը իր դրոշակներով և ամբողջ հայ ժողովուրդը:

4. Հայոց Դրամատիքական Ընկերութեան նախաձեռնութեամբ Արտիստական թատրոնում տեղի կունենայ ձրի ներկայացում հայ աշակերտութեան համար:

5. Երեկոյեան 8 ժամին Թիֆլիսի Ժողովարանում տեղի կունենան տօնին ներկուած դասախօսութիւններ:

6. Հոկտեմբերի 13-ին, Վանաց աւագ եկեղեցում մատուցում է ս. պատարագ ամբողջ հոգևոր դասի և վերոյիշեալ բոլոր հաստատութիւնների և ժողովրդի ներկայութեամբ: Պատարագից և Թեմ. Առաջնորդը: Պատարագից յետոյ կը կատարուի Հայրապ. մաղթանք: Ապա հանդէսը Վանքի աւագ եկեղեցում եկեղեցական թափօրով կուղևորուի դէպի ներսիսեան դպրոցի նոր շէնքը:

Դպրոցի դահլիճում հանդէսը բաց կանի Թեմի Առաջնորդը մի բանախօսութեամբ:

Հանդէսին հրաւիրուած են լինելու պետական բարձրաստիճան պաշտօնեաներ և քաղաքիս բոլոր կուլտուրական հաստատութիւնների ներկայացուցիչներ:

Հրաւիրուած օտարազգի հիւրերի համար կը լինի բանախօսութիւն սուսերէն լեզուով:

Հանդիսին կը նդունուին շնորհաւորութիւններ տօնի աւերթով:

Դպ. Հոգար. նը ներկաներին կը հիւրասիրի թէկոյ:

7. Նոյն օրը երեկոյեան Թիֆլիսի Ժողովարանի դահլիճում տեղի կունենայ բանկէտ:

8. Հոկտեմբերի 14-ին Արտիստիք Թատ. երեկ. 8 ժ. լինելու է տօնին ներկուած ներկայացում՝ կենդանի պատկերներով:

Ա. Առաջնորդ՝ Մկրտաչ